Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-660-11.09.2023-ՏԵ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ *ՆԵՐ* ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մաքսային կարգավորման մասին» 2022 թվականի սեպտեմբերի 14-ի ՀՕ-353-Ն օրենքի 321-րդ հոդվածից հետո լրացնել նոր՝ 321.1-ին հոդված հետևյալ բովանդակությամբ՝

«**Հոդված 321.1. «Եվրասիական տնտեսական միությունում փոխադրումների հետագծման համար նավիգացիոն կապարակնիքների կիրառման մասին» 2022 թվականի ապրիլի 19-ին ստորագրված համաձայնագրով նախատեսված դեպքերում մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների նկատմամբ տեղորոշման կապարակնիքների կիրառմամբ հետագծելիությունն ապահովող ազգային օպերատորի կողմից պարտավորությունները չկատարելը *կամ ոչ պատշաճ կատարելը***

1. «Եվրասիական տնտեսական միությունում փոխադրումների հետագծման համար նավիգացիոն կապարակնիքների կիրառման մասին» 2022 թվականի ապրիլի 19-ին ստորագրված համաձայնագրին համապատասխան սահմանված դեպքերում մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների նկատմամբ տեղորոշման կապարակնիքների կիրառմամբ հետագծելիությունն ապահովող ազգային օպերատորի կողմից նշված համաձայնագրով սահմանված՝ իր կողմից օգտագործվող տեղեկատվական համակարգի անխափան աշխատանքի ապահովման պարտավորության չկատարումը *կամ ոչ պատշաճ կատարումը*, բացառությամբ անհաղթահարելի ուժի առկայության դեպքերի, որի հետեւանքով չի առաջանում մաքսային վճարների, մաքսային մարմինների կողմից գանձվող այլ հարկերի, տուրքերի եւ վճարների (բացառությամբ մաքսային մարմինների կողմից մաքսային գործառնությունների կատարման համար գանձվող պետական տուրքի) չհաշվարկում (պակաս հաշվարկում) կամ չվճարում (պակաս վճարում), ինչպես նաեւ արգելքների եւ սահմանափակումների չկիրառում՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝

առաջացնում է տուգանք երեսուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված խախտումը մեկ ամսվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք հիսուն հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված խախտումը, որի հետեւանքով առաջանում է մաքսային վճարների, մաքսային մարմինների կողմից գանձվող այլ հարկերի, տուրքերի եւ վճարների (բացառությամբ մաքսային մարմինների կողմից մաքսային գործառնությունների իրականացման համար գանձվող պետական տուրքի) չհաշվարկում (պակաս հաշվարկում) կամ չվճարում (պակաս վճարում)՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝

առաջացնում է տուգանք՝ չհաշվարկված (պակաս հաշվարկված) կամ չվճարված (պակաս վճարված) մաքսային վճարների, մաքսային մարմինների կողմից գանձվող այլ հարկերի, տուրքերի եւ վճարների (բացառությամբ մաքսային մարմինների կողմից մաքսային գործառնությունների կատարման համար գանձվող պետական տուրքի) ընդհանուր գումարի հիսուն տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան հարյուր հազար դրամի չափով:

4. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված խախտումը, որն առաջացնում է արգելքների եւ սահմանափակումների չկիրառում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների կամ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի հիսուն տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան հարյուր հազար դրամի չափով:

5. Սույն հոդվածի 1-ից 4-րդ մասերով սահմանված խախտումները մեկ ամսվա ընթացքում երկու անգամից ավելի կատարելը հիմք է ազգային օպերատորի գործունեության դադարեցման համար՝ Կառավարության սահմանած կարգով:»:

Հոդված 2. *Օրենքի 270-րդ հոդվածի 2-րդ մասում՝*

1. 8-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

2. լրացնել նոր 9-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«9) ապահովել ժամանակավոր պահպանման պահեստների բաց տարածքների և հրապարակների մակերեսների պինդ ծածկույթի (ասֆալտի, բետոնի կամ նմանատիպ այլ ծածկույթի) առկայությունը:»:

Հոդված 3. *Օրենքի 177-րդ հոդվածում՝*

1. 1-ին մասի երկրորդ պարբերության մեջ «օտարերկրյա այն ֆիզիկական անձի սեփականության ներքո» բառերից հետո լրացնել «(կամ ձեռք են բերվել վարկային կամ լիզինգային պայմանագրով և գտնվել են տիրապետման ներքո)» բառերը.

2. 1-ին մասի երկրորդ պարբերության վերջում լրացնել նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Վարկային կամ լիզինգային պայմանագրի հիման վրա ձեռքբերված նշված տրանսպորտային միջոցները՝ դրանց ազատ շրջանառության նպատակով բացթողնմանն ուղղված մաքսային գործառնությունների իրականացման պահին պետք է գտնվեն այդպիսի անձի սեփականության ներքո:».

3. 6-րդ մասի 2-րդ կետում «օտարերկրյա այն ֆիզիկական անձի սեփականության ներքո» բառերից հետո լրացնել «(կամ ձեռք են բերվել վարկային կամ լիզինգային պայմանագրով և գտնվել են տիրապետման ներքո)» բառերը, իսկ «.» կետադրական նշանը փոխարինել «:» կետադրական նշանով.

4. 6-րդ մասի 2-րդ կետում լրացնել նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Վարկային կամ լիզինգային պայմանագրի հիման վրա ձեռքբերված նշված տրանսպորտային միջոցները՝ դրանց ազատ շրջանառության նպատակով բացթողնմանն ուղղված մաքսային գործառնությունների իրականացման պահին պետք է գտնվեն այդպիսի անձի սեփականության ներքո.»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հոդված 5. *Սույն օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասով նախատեսված իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում:*

ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

~~Առաջին~~ Երկրորդ ընթերցում

ՆԱԽԱԳԻԾ

Կ-660-11.09.2023-ՏԵ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Մաքսային կարգավորման մասին» 2022 թվականի սեպտեմբերի 14-ի ՀՕ-353-Ն օրենքի 321-րդ հոդվածից հետո լրացնել նոր՝ 321.1-ին հոդված հետեւյալ բովանդակությամբ՝

«**Հոդված 321.1. ~~1.~~ «Եվրասիական տնտեսական միությունում փոխադրումների հետագծման համար նավիգացիոն կապարակնիքների կիրառման մասին» 2022 թվականի ապրիլի 19-ին ստորագրված համաձայնագրով նախատեսված դեպքերում մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների նկատմամբ տեղորոշման կապարակնիքների կիրառմամբ հետագծելիությունն ապահովող ազգային օպերատորի կողմից պարտավորությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը**

1. «Եվրասիական տնտեսական միությունում փոխադրումների հետագծման համար նավիգացիոն կապարակնիքների կիրառման մասին» 2022 թվականի ապրիլի 19-ին ստորագրված համաձայնագրին համապատասխան սահմանված դեպքերում մաքսային հսկողության ներքո գտնվող ապրանքների նկատմամբ տեղորոշման կապարակնիքների կիրառմամբ հետագծելիությունն ապահովող ազգային օպերատորի կողմից նշված համաձայնագրով սահմանված՝ իր կողմից օգտագործվող տեղեկատվական համակարգի անխափան աշխատանքի ապահովման պարտավորության չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը, բացառությամբ անհաղթահարելի ուժի առկայության դեպքերի, որի հետեւանքով չի առաջանում մաքսային վճարների, մաքսային մարմինների կողմից գանձվող այլ հարկերի, տուրքերի եւ վճարների (բացառությամբ մաքսային մարմինների կողմից մաքսային գործառնությունների կատարման համար գանձվող պետական տուրքի) չհաշվարկում (պակաս

հաշվարկում) կամ չվճարում (պակաս վճարում), ինչպես նաեւ արգելքների եւ սահմանափակումների չկիրառում՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝

առաջացնում է տուգանք երեսուն հազար դրամի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված խախտումը մեկ ամսվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք հիսուն հազար դրամի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված խախտումը, որի հետեւանքով առաջանում է մաքսային վճարների, մաքսային մարմինների կողմից գանձվող այլ հարկերի, տուրքերի եւ վճարների (բացառությամբ մաքսային մարմինների կողմից մաքսային գործառնությունների իրականացման համար գանձվող պետական տուրքի) չհաշվարկում (պակաս հաշվարկում) կամ չվճարում (պակաս վճարում)՝ հանցագործության հատկանիշների բացակայության դեպքում՝

առաջացնում է տուգանք՝ չհաշվարկված (պակաս հաշվարկված) կամ չվճարված (պակաս վճարված) մաքսային վճարների, մաքսային մարմինների կողմից գանձվող այլ հարկերի, տուրքերի եւ վճարների (բացառությամբ մաքսային մարմինների կողմից մաքսային գործառնությունների կատարման համար գանձվող պետական տուրքի) ընդհանուր գումարի հիսուն տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան հարյուր հազար դրամի չափով:

4. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված խախտումը, որն առաջացնում է արգելքների եւ սահմանափակումների չկիրառում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ ապրանքների կամ տրանսպորտային միջոցների մաքսային արժեքի հիսուն տոկոսի չափով, բայց ոչ պակաս, քան հարյուր հազար դրամի չափով:

5. Սույն հոդվածի 1-ից 4-րդ մասերով սահմանված խախտումները մեկ ամսվա ընթացքում երկու անգամից ավելի կատարելը հիմք է ազգային օպերատորի գործունեության դադարեցման համար՝ Կառավարության սահմանած կարգով:»:

Հոդված 2. Օրենքի 270-րդ հոդվածի 2-րդ մասում՝

3. 8-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.

4. լրացնել նոր 9-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«9) ապահովել ժամանակավոր պահպանման պահեստների բաց տարածքների և հրապարակների մակերեսների պինդ ծածկույթի (ասֆալտի, բետոնի կամ նմանատիպ այլ ծածկույթի) առկայությունը:»:

Հոդված 3. Օրենքի 177-րդ հոդվածում՝

5.1-ին մասի երկրորդ պարբերության մեջ «օտարերկրյա այն ֆիզիկական անձի սեփականության ներքո» բառերից հետո լրացնել «(կամ ձեռք են բերվել վարկային կամ լիզինգային պայմանագրով և գտնվել են տիրապետման ներքո)» բառերը.

6.1-ին մասի երկրորդ պարբերության վերջում լրացնել նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Վարկային կամ լիզինգային պայմանագրի հիման վրա ձեռքբերված նշված տրանսպորտային միջոցները՝ դրանց ազատ շրջանառության նպատակով բացթողնմանն ուղղված մաքսային գործառնությունների իրականացման պահին պետք է գտնվեն այդպիսի անձի սեփականության ներքո:».

7. 6-րդ մասի 2-րդ կետում «օտարերկրյա այն ֆիզիկական անձի սեփականության ներքո» բառերից հետո լրացնել «(կամ ձեռք են բերվել վարկային կամ լիզինգային պայմանագրով և գտնվել են տիրապետման ներքո)» բառերը, իսկ «.» կետադրական նշանը փոխարինել «:» կետադրական նշանով.

8. 6-րդ մասի 2-րդ կետում լրացնել նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ՝

«Վարկային կամ լիզինգային պայմանագրի հիման վրա ձեռքբերված նշված տրանսպորտային միջոցները՝ դրանց ազատ շրջանառության նպատակով բացթողնմանն ուղղված մաքսային գործառնությունների իրականացման պահին պետք է գտնվեն այդպիսի անձի սեփականության ներքո.»:

Հոդված ~~2~~4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հոդված 5. Սույն օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասով նախատեսված իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՄԱՔՍԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-660-11.09.2023-ՏԵ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Հաշվի առնելով, որ նախագծում կատարվել են մեկից ավել լրացումներ առաջարկում ենք նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄ» բառը փոխարինել «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող նոր շարադրվող հոդվածի «Հոդված 321.1. 1.» համարն առաջարկում ենք փոխարինել՝ «Հոդված 321.1.» համարով	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված, 1-ին մաս	«Եվրասիական տնտեսական միությունում փոխադրումների հետագծման համար նավիգացիոն կապարակնիքների կիրառման մասին» համաձայնագրի 5-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերությամբ սահմանված է պարտավորություն առ այն, որ ՀՀ օպերատորը պարտավոր է ապահովել անդամ պետությունների տարածքներով փոխադրումների հետագծման համար կիրառվող՝ տեղեկատվական համակարգի աշխատանքը՝ մշտական հիմունքներով՝	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:

			շաբաթը 7 օր, օրական 24 ժամվա ընթացքում, եւ երաշխավորել, որ վերոհիշյալ պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար ՀՀ օպերատորը կրի պատասխանատվություն՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Նախագծով առաջարկվում է պատասխանատվությունը նախատեսել նաև օպերատորի կողմից պարտավորությունների ոչ պատշաճ կատարման համար: Ըստ այդմ նախագծի 1-ին հոդվածում «չկատարելը» բառից հետո լրացնել «կամ ոչ պատշաճ կատարելը» բառերը, իսկ 1-ին մասում «չկատարումը» բառից հետո՝ «կամ ոչ պատշաճ կատարումը» բառերը:		
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի նոր 2-րդ հոդված	«Մաքսային կարգավորման մասին» օրենքի 270-րդ հոդվածի 2-րդ մասում լրացնել նոր կետ, համաձայն որի՝ ժամանակավոր պահպանման պահեստների բաց տարածքների և հրապարակների մակերեսները պետք է ունենան պինդ ծածկույթ (ասֆալտի, բետոնի կամ նմանատիպ այլ ծածկույթի): Առաջարկը պայմանավորված է այն հանգամանքով, որ օրենքի ընդունման ժամանակ տեղի է ունեցել տեխնիկական վրիպակ և համապատասխան պահանջ նախատեսվել է միայն մաքսային պահեստների համար՝ օրենքի 276-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով, սակայն հաշվի առնելով այն, որ ժամանակավոր պահպանման պահեստներին և մաքսային պահեստներին այս մասով պետք է առաջադրվեն միանման պահանջներ (երկուսն	Նախագիծը լրացվել է նոր 2-րդ հոդվածով:	Ընդունվել է:

			էլ համարվում են մաքսային հսկողության գոտիներ և իրականացվում է մաքսային հսկողության ներքո ապրանքների պահպանության գործունեություն), առաջարկվում է համապատասխան նորմը նախատեսել նաև ժամանակավոր պահպանության պահեստների համար: Միաժամանակ, Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող լրացման կապակցությամբ առաջարկում ենք Օրենքի 270-րդ հոդվածի 2-րդ մասի 8-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով: Ըստ այդմ նախագիծն առաջարկում ենք լրացնել նոր 2-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ. *«Հոդված 2. Օրենքի 270-րդ հոդվածի 2-րդ մասում՝* *8-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով.* *2.լրացնել նոր 9-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.* *«9) ապահովել ժամանակավոր պահպանման պահեստների բաց տարածքների և հրապարակների մակերեսների պինդ ծածկույթի (ասֆալտի, բետոնի կամ նմանատիպ այլ ծածկույթի) առկայությունը:»: »*		
5.	ՀՀ կառավարություն	Նախագծի նոր 3-րդ հոդված	«Մաքսային կարգավորման մասին» օրենքի 177-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերում կատարել խմբագրական փոփոխություններ՝ համապատասխանեցնելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 20.12.	Նախագիծը լրացվել է նոր 3-րդ հոդվածով, որի հետևանքով փոփոխվել է նաև	Ընդունվել է:

			2017թ. N107 որոշման երրորդ հավելվածի 6-րդ կետով նախատեսված դրույթներին, քանի որ նշված դրույթները որոշակի անհամապատասխանության մեջ են գտնվում մշտական բնակության ժամանող անձանց համար լիզինգով ձեռքբերված տրանսպորտային միջոցների՝ ներմուծման մաքսատուրքի և հարկերի վճարումից ազատմամբ ներմուծման հնարավորություն նախատեսող՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 20.12.2017թ. N107 որոշմամբ կատարված փոփոխության հետ: Մասնավորապես, նշված դրույթները հանձնաժողովի որոշման առկայության պայմաններում դիտարկվում են որպես խիստ նորմեր և սահմանափակում են մշտական բնակության ժամանող անձանց համար արտոնության կիրառության հնարավորությունը: Նախագծի 3-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսվող լրացման կապակցությամբ առաջարկում ենք Օրենքի 177-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ պարբերության վերջում «.» կետադրական նշանը փոխարինել «:» կետադրական նշանով: Ըստ այդմ նախագիծն առաջարկում ենք լրացնել նոր 3-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ. *«**Հոդված 3.** Օրենքի 177-րդ հոդվածում՝* *1.1-ին մասի երկրորդ պարբերության մեջ «օտարերկրյա այն ֆիզիկական անձի սեփականության ներքո» բառերից հետո լրացնել «(կամ ձեռք են բերվել վարկային կամ*	նախագծի վերնագիրը:	

			լիզինգային պայմանագրով և գտնվել են տիրապետման ներքո)» բառերը. *2. 1-ին մասի երկրորդ պարբերության վերջում լրացնել նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ՝* *«Վարկային կամ լիզինգային պայմանագրի հիման վրա ձեռքբերված նշված տրանսպորտային միջոցները՝ դրանց ազատ շրջանառության նպատակով բացթողնմանն ուղղված մաքսային գործառնությունների իրականացման պահին պետք է գտնվեն այդպիսի անձի սեփականության ներքո:».* *3.6-րդ մասի 2-րդ կետում «օտարերկրյա այն ֆիզիկական անձի սեփականության ներքո» բառերից հետո լրացնել «(կամ ձեռք են բերվել վարկային կամ լիզինգային պայմանագրով և գտնվել են տիրապետման ներքո)» բառերը, իսկ «.» կետադրական նշանը փոխարինել «:» կետադրական նշանով.* *4. 6-րդ մասի 2-րդ կետում լրացնել նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ՝* *«Վարկային կամ լիզինգային պայմանագրի հիման վրա ձեռքբերված նշված տրանսպորտային միջոցները՝ դրանց ազատ շրջանառության նպատակով բացթողնմանն ուղղված մաքսային գործառնությունների իրականացման պահին պետք է գտնվեն այդպիսի անձի սեփականության ներքո.»:* Վերոնշյալ հոդվածների լրացմամբ, առաջարկում ենք վերանայել նախագծի հոդվածների համարակալումը:		

6.	ՀՀ կառավարություն	Նախագծի նոր 5-րդ հոդված	Նախագծով առաջարկում ենք սահմանել անցումային դրույթ՝ նախագծով նախատեսվող իրավական ակտի ընդունման համար: Ըստ այդմ նախագիծն առաջարկում ենք լրացնել նոր 5-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ. ***«Հոդված 5.*** *Սույն օրենքի 1-ին հոդվածի 5-րդ մասով նախատեսված իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեցամսյա ժամկետում:»*	Նախագիծը լրացվել է նոր 5-րդ հոդվածով:	Ընդունվել է: